



# Ս Ի Ո Ն

## ԺԶ. Տ Ա Ր Ի — Ն Ո Ր Շ Ր Զ Ա Ն

1942

ՅՈՒՆՈՒՍ.Ր - ՓԵՏՐՈՒՍ.Ր

ԹԻԻ 1-2

### ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ԶՕՐ ԽՕՍՔԸ

#### ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻԻ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒԱԾ

Հաւաճուած ենք այստեղ միմեանց շնորհատրեղու Նոր Տարին եւ փոխադարձաբար մաղբելու որ 1942 բուսականը բախտաւոր ու երջանիկ տարի մը ըլլայ ամենուս համար:

Միեւնոյն մաղբանմենեով եւ միեւնոյն փափաւմենեով հաւաճուած էինք անցեալ եւ նախանցեալ տարիներն ալ, երբ արդէն պատերազմներու որքան ու արձագանգը մեզ կը հասնէին աշխարհի զանազան կողմերէն, ու ամենուս ցանկութիւնն ու մաղբանմեն էր, որ ազգերու միջեւ բացուած այս դժնդակ պայմարը շուտով վերջանար ու աւելի ծաւալուն հանգամանք մը չառնէր:

Չիրականացան դժբախտաբար մեր յոյսերը ու լսելի չեղան մեր մաղբանմեները, ու այսօր կ'ողջունենք Նոր Տարին այնպիսի պահու մը, երբ պատերազմը չէ սահմանափակուած թանկ մը նակասներու վրայ, այլ գրեթէ տարածուած է ամբողջ երկրագունքի երեսը, ու համաշխարհային սիտանեան պայմար մըն է որ կը մղուի ցամաքներու վրայ, ջուրերու խորք, օդերու մէջ ու ամպերու ետին, պայմար մը մահացու եւ համայնաւէր, որուն նմանը Պատմութիւնը դեռ չէ արձանագրած, եւ որուն երեսէն միլիոնաւոր կեանքներ, ամէն տարիքէ ու սեռէ, կ'աննետան կամ բեռաւորութեան կը մասնութիւն, եւ դարերու նպաստ ու աշխատութեանց արդիւնները, մարդկային հանճարի ու հաղթակերբութեան կորոզները կը փերուին ու փոշի կը դառնան:

Անաւասիկ այսպիսի դառն ու դաժան իրականութեան մը առջեւ այսօր կը մտնենք Նոր Տարիի սեմէն ներս: Մենք սակայն պարտինք գոհանալ Աստուծով, որ բրիտանական զէնքերու փայլուն յաջողութիւններուն շնորհիւ հեռացան պատերազմի վտանգը մեր սահմաններէն ու Պաղեստինի բնակիչները գերծ մնացին ներկայ աշխարհաստան պատերազմի ստեղծած արհաւիրքներէն:

Ճիշդ է որ ճնշեալական տագնապը արդէն սկսած է ննցել մեր վրայ, տագնապ որ՝ ցորեան պատերազմը երկարի՝ կը սպառնայ նեղակեց: Լայն չա-

153-98 19353 ա ի

վերու հասնիլ, բայց եւ այնպէս դարձեալ փառք սանք վերին նախախնամութեան, որ մեր հոգատար կառավարութեան հզօր մականին ու ժողովրդատար պաշտպանութեան ներքեւ այս երկրին մէջ կ'ապրինք ու կը շնչենք հանգիստ ու ապահով, այնպէս որ պատերազմէն աղէտեալ միլիոնաւորներու զրկանքին, սառապանքին ու գալարումներուն հով շա՛տ փոքր, շատ աննշան կը մնան մեր առօրեայ ներդրիւններն ու դժուարութիւնները :

Այսու հանդերձ խորհելով որ Պատմութեան ամենէն նզնաժամային օրերը կ'ապրինք ու կրնայ այս պատերազմը սակաւին շատ երկարիլ, պէ՛տ է ուրեմն կռուենք ժամանակիս փափկութիւնը, ու դեռեւս անստոյգ ապագայի մը պատկերը ունենալով առջեւնիս՝ ըլլանք շնչահայեաց եւ իմաստուն եւ բոլորս համառունջ եւ միախորհուրդ՝ կազմ ու պատրաստ կենանք պատկերին վրայ, մինչեւ որ ամենաբարին Աստուած, որուն ձեռքն է ազգերու բախտն ու նակատագիրը, ողորմի սառապակոծ մարդկութեան, հեռացնէ փորձութեան այս բաժակը աշխարհէն ու վերջ սայ ներկայ ահաւոր պատերազմին պատհառած սուսուսներուն ու մղձաւանջին :

Այժմ կանգնած Նոր Տարիի սեմին, եթէ յետագարձ ակնարկ մը ձգենք վերջացող տարին վրայ, պէ՛տ է դարձեալ միտքարուծինք, խորհելով որ Ս. Աթոռիս Միաբանութիւնը ու Անոր հովանիին սակ ապրող հայ ժողովուրդը պատերազմի այս երրորդ տարին կը թեւակոխէ, առանց սակայն լայն չափերով ցնցումներ կրելու :

Մասնաւորապէս Ս. Աթոռիս եկեղեցական, վարչական, կրթական, քեմական, տնտեսական եւ ուրիշ ամէն նիւղերու վերաբերեալ գործերն ու գործառնութիւնները, ըստ սովորականին, շարունակած են ընթանալ անսայրաք, աչալուրջ հսկողութեամբ իրարու յաջորդող Պատմութեան Տնօրէն Ժողովներու եւ իւրաքանչիւր նիւղերու հոգեւորիկ տնօրէններուն ու անոնց օգնականներուն : Ա.տնց ամենուն կը յայտնենք մեր հայրական սրտի խորունկ գոհունակութիւնը :

Մասնաւոր հանութեամբ կը փափաքիմ յիշատակել թէ մեր Ընծայարանը եւ Ժառանգաւորաց Վարժարանը տարւոյս ընթացքին տուին իրենցմէ սպասուած հունձքը, այսինքն է՝ Սուրբ Ուխտիս վրայ աւելցան երկու հոգեւորիկ արեղաներ եւ վեց խոստմնալից սարկաւազներ : Առաջինները արդէն Միաբանութեան շարքին մէջ սկսան բերել իրենց գործօն ծառայութիւնը, ու նորընծայ սարկաւազները մեան Ընծայարանի բաժինը ու կը հետեւին անոր եռամեայ դասընթացքին :

Վստահ եմ որ իմ սիրելի Միաբանութիւնը, ծառայութեան հոգիով ու արքունուէր զգացումներով՝ ասկէ ետքն ալ պիտի շարունակէ կատարել իր նուիրական պատրաստութիւնը, որպէսզի կրօնական ու ազգային մեր այս պանծալի հաստատութիւնը՝ ըստ հոգեւորին, ըստ բարոյականին եւ ըստ նիւթականին՝ պահէ ու պահպանէ իր վայելչութիւնն ու բարեզարդութիւնը գալիք օրերուն ալ, օրեր՝ որոնք, ինչպէս ըսի, կրնան բերես ըլլալ սակաւին մնայլ ու փոքորկայոյց :

Եւ սակայն մեծ է մեր պատշէյի Սուրբ Գլխադրին զօրութիւնը, որուն ուժեղ պաշտպանութեամբ կրցած է այս Սուրբ Տունը ազատիլ ու անաղաւթ

դուրս ելլել անցեալին մէջ զինք շրջապատող շատ մը փոքորիկներէ, ու պահպանել իր դարաւոր գոյութիւնը իրեն սպառնացող ամէն վտանգաւոր պատահարներու դէմ: Գիտնանք այս անգամ ալ, սիրելիք, համբերել ու տոկալ արիութեամբ՝ լաւագոյն օրերու յոյսը արտերնուս մէջ ու հեռանկարը աչքերնուս առջեւ:

Շնորհակալութիւնք թէ՛ արբանուէր Միաբանութեան, թէ՛ Ընծայարանի եւ Ժառ. Վարժարանի աշակերտներուն եւ թէ՛ Սրբոց Քարգմանչաց Վարժարանի սան եւ սանուհիներուն՝ իրենց ուղերձներով արտայայտած ազնիւ զգացումներուն եւ բարի մաղթանքներուն համար: Ես եւս Ս. Ուխտիս անձնուէր Միաբանութեան, վարժարաններու հոգեւորնի տեսչներուն, բարեջան ուսուցիչներուն եւ ուսանողներուն, Ս. Արքուիս պատօսեմաններուն, Երուսաղէմի պատրիարքութեան ենթակայ մօտաւոր եւ հեռաւոր մեր բոլոր պատուական եւ սիրելի ազգայիններուն հայրական սիրով կը շնորհաւորեմ Ամանորը ու կը մաղթեմ որ 1942 թուականը ըլլայ սարի մը խակապէս օրհնուած ու երջանիկ, ու ծագէ աշխարհի վրայ խաղաղութեան ցանկալի արեւալոյսը ու բերէ քաղցր սարիի մը պտակը, ըստ Սաղմոսեգոյին. «Օրհնեսցի պսակ սարոյ քաղցրութեան հո»: Օրհնէ՛ Տէր Աստուած սարոյս պտակը եւ բարի ու քաղցր սարի մը ընէ՛ զայն ամբողջ աշխարհի ու մասնաւորապէս մեր նուիրական ու ցանկալի Հայրենիքին եւ Սփիւռքի մէջ ապրող մեր ժողովուրդին համար, սարի մը՝ ոչ թէ դժնիկներով եւ փութերով, այլ խաղաղութեան ձիթենիի մշտադալար ուտերով պսակուած:

Թո՛ղ սիեգեբքի եւ ժամանակներու Տէրն ու Արարիչը լսէ մեր անկեղծ եւ արտաբոլս մաղթանքները ու այս ամենուս սարի մը խաղաղաւէտ, սարի մը բարի եւ շնորհապարգեւ:

Մեր ամանորական այս հանդէսին մեծագոյն հանդիմով կ'ողջունեմ մեր սիրելի եղբայրակցին Գեոր. Տ. Մամբրէ Սրբազան Եպիսկոպոսի մեր մէջ ներկայութիւնը, շնորհակալութիւնք յայտնելով՝ որ բարեհաճեցաւ անձամբ պատասխանել մեր արագին հրաւերին՝ միասին անցընելու համար մեր Նոր Տարին եւ Ս. Ծննդեան տօնը մեր Փրկչին Յիսուսի ծննդավայրին՝ Բեթղեհէմի մէջ:

Յանձին Նորին Սրբազան Եղբայրութեան կ'ողջունեմ նաեւ իր հովուական խնամքը վայելող Եգիպտոսի մեր սիրելի եւ պատուական Հայութիւնը՝ ի բոլոր արեւ. բոլորին մաղթելով ամենայն յաջողութիւն եւ բարօրութիւն ի Տեառնէ՛ եւ շատուստ սարիներ անվորձ, խաղաղ ու երջանկաբեր:

